Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՍԱՐԳԻՍ ՀԱՅՈՑՅԱՆԻ՝ ԲԵԼԳԻԱՅԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը

Սարգիս Հայոցյան

2. Զբաղեցրած պաշտոնը

Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի նախագահ

3. Գործուղման վայրը և ժամկետները

Բելգիայի Թագավորություն, ք. Բրյուսել, հոկտեմբերի 13-ից 16-ը, 2024 թվական

4. Հրավիրող կողմը

Եվրոպական հանձնաժողովի հետազոտության և նորարարության գլխավոր տնօրենություն և ԵՄ արտաքին գործողությունների ծառայություն

5. Գործուղման նպատակը (աշխատանքային որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)

Մասնակցություն «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև Միության «Հորիզոն Եվրոպա» հետազոտությունների և նորարարության շրջանակային ծրագրին Հայաստանի Հանրապետության մասնակցության մասին» համաձայնագրի շրջանակում գործող ԵՄ-Հայաստան համատեղ կոմիտեի երրորդ նիստին և ՀՀ-ԵՄ գործընկերության օրակարգի նոր նախագծի 2.6 կետի քննարկմանը

6. Քննարկված թեմաները

1. Բարձրագույն կրթության, գիտության, մշակույթի, սպորտի և երիտասարդության ոլորտներում Հայաստան-ԵՄ գործակցության շարունակականության և ընդլայնման հնարավորությունները,
2. Հետազոտությունների և նորարարության ոլորտներում քաղաքականության բարեփոխումների մշակմանն ուղղված աջակցություն՝ ներառյալ հետազոտությունների և նորարարության ոլորտներում ենթակառուցվածքների զարգացումը,

3. Եվրոպական հետազոտական և կրթական տարածքներին Հայաստանի ակտիվ մասնակցությանը և ինտեգրմանն ուղղված քայլերը և ազգային մակարդակում իրականացվելիք բարեփոխումները,
4. ԵՄ «Էրազմուս+», «Ստեղծագործ Եվրոպա», երիտասարդության և մեդիայի ոլորտներում ԵՄ հարթակներում ՀՀ ինտեգրման և դրան ուղղված ազգային մակարդակում իրականացվելիք բարեփոխումները,
5. Հայաստանում սպորտային քաղաքականության մշակման ուղղությամբ համագործակցության ընդլայնման հնարավորությունները,
6. Մասնակցություն «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև Միության «Հորիզոն Եվրոպա» հետազոտությունների և նորարարության շրջանակային ծրագրին Հայաստանի Հանրապետության մասնակցության մասին» համաձայնագրի շրջանակում գործող ԵՄ-Հայաստան համատեղ կոմիտեի երրորդ նիստին,
7. «Հորիզոն Եվրոպա» ծրագրին ՀՀ մասնակցության 2023-2024թթ. վիճակագրական տվյալները, «Հորիզոն Եվրոպա» ծրագրի ընձեռած հնարավորությունները և ծրագրին Հայաստանի մասնակցության ընդլայնման ուղիները,
8. «Հորիզոն Եվրոպա» ծրագրին ՀՀ մասնակցությունը խթանելու նպատակով «Գիտական և նորարարական գործընկերությանն աջակցման կենտրոն» հիմնադրամի կողմից իրականացվող միջոցառումները,
9. Գիտության և նորարարության հարցերով Արևելյան գործընկերության հարթակի գործունեությունը և բազմակողմ համագործակցության զարգացման ուղղությունները,
10. Այլ ընթացիկ հարցեր:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

2024 թվականի հոկտեմբերի 14-ից 15-ը Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի նախագահ Սարգիս Հայոցյանը ք. Բրյուսելում մասնակցել է ՀՀ-ԵՄ գործընկերության օրակարգի «Մարդկանց միջև շփումներ» հարթակի նոր նախագծի քննարկմանը նվիրված աշխատանքային հանդիպմանը և «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև Միության «Հորիզոն Եվրոպա» հետազոտությունների և նորարարության շրջանակային ծրագրին Հայաստանի

Հանրապետության մասնակցության մասին» համաձայնագրի շրջանակում գործող ԵՄ-Հայաստան համատեղ կոմիտեի երրորդ նիստին: Հայաստան-ԵՄ «Մարդկանց միջև շփումների հարցերով» ենթակոմիտեի նիստը գլխավորում էր ԵՄ արտաքին գործողությունների ծառայության Վրաստանի, Մոլդովայի, Հայաստանի, Ադրբեջանի և Բելառուսի հարցերով բաժնի պատասխանատուի տեղակալ Ջուլիեն Բուրտեմբուրգը: Նիստի ընթացքում քննարկվել են հարթակի շրջանակում համագործակցության նոր թիրախային ուղղությունները և մի շարք հարցեր, այդ թվում՝ հետազոտությունների և նորարարության ոլորտներում քաղաքականության բարեփոխումների մշակմանն ուղղված աջակցություն՝ ներառյալ հետազոտությունների և նորարարության ոլորտներում ենթակառուցվածքների զարգացումը, Եվրոպական հետազոտական տարածքին Հայաստանի ակտիվ մասնակցությանը և ինտեգրմանն ուղղված քայլերը: Անդրադարձ է կատարվել նաև ԵՄ «Էրազմուս+» և ԵՄ այլ հարթակներին ՀՀ ինտեգրման և դրան ուղղված ազգային մակարդակում իրականացվելիք բարեփոխումներին:

Աշխատանքային հանդիպում է կայացել Եվրոպական հանձնաժողովի կրթության և մշակույթի գլխավոր տնօրենության, Եվրոպական հանձնաժողովի կապի ցանցերի, բովանդակության և տեխնոլոգիաների գլխավոր տնօրենության ներկայացուցիչների, ինչպես նաև Եվրոպական հանձնաժողովի կրթության, երիտասարդության, սպորտի և մշակույթի գլխավոր տնօրենության նորարարության, թվային կրթության և միջազգային համագործակցության հարցերով տնօրեն Ա. Անգելովա-Կրաստևայի հետ: Հանդիպումների ընթացքում քննարկվել է բարձրագույն կրթության ոլորոտում ԵՄ «Էրազմուս+» ծրագրին ՀՀ մասնակցությանն առնչվող մի շարք հարցեր:

2024 թվականի հոկտեմբերի 15-ին Ս. Հայոցյանը մասնակցել է «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև Միության «Հորիզոն Եվրոպա» հետազոտությունների և նորարարության շրջանակային ծրագրին Հայաստանի Հանրապետության մասնակցության մասին» համաձայնագրի շրջանակում գործող ԵՄ-Հայաստան համատեղ կոմիտեի երրորդ նիստին, որը համանախագահում էին ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանը և ԵՀ հետազոտությունների և նորարարության հարցերով գլխավոր տնօրենության «Հորիզոն Եվրոպա» ծրագրին ասոցացման հարցերով ստորաբաժանման ղեկավարի տեղակալ Անն Հագլունդ-

Մորիսին: Նիստի ընթացքում քննարկվել են ՀՀ գիտական համայնքի՝ Եվրոպական հետազոտական տարածքին ինտեգրման վերաբերյալ մի շարք հարցեր, այդ թվում՝ «Հորիզոն Եվրոպա» ծրագրին ՀՀ մասնակցության 2023-2024թթ. վիճակագրական տվյալները, «Հորիզոն Եվրոպա» ծրագրին ՀՀ մասնակցությունը խթանելու նպատակով ԵՄ աջակցության հնարավոր միջոցները, ՀՀ ֆինանսական պարտավորությունների կատարման ընթացքը, Եվրոպական հետազոտական տարածքին ՀՀ ինտեգրման ուղղությամբ գիտության ոլորտում իրականացվող ծրագրերը՝ այդ թվում Ակադեմիական քաղաք ծրագրի իրականացման ընթացքը, «Հորիզոն Եվրոպա» ծրագրին ՀՀ մասնակցությունը խթանելու նպատակով «Գիտական և նորարարական գործընկերությանն աջակցման կենտրոն» հիմնադրամի կողմից իրականացվող միջոցառումները, Հետազոտությունների և նորարարության հարցերով Արևելյան գործընկերության ոչ պաշտոնական աշխատանքային խմբի շրջանակում իրականացվող աշխատանքները: Նշվել է, որ 2024 թվականին աճել է «Հորիզոն Եվրոպա» ծրագրի շրջանակում ՀՀ կազմակերպություններից ներկայացված հայտերի քանակը, ինչպես նաև աճել է ՀՀ մասնակցության գործակիցը: Ստորագրված դրամաշնորհների թիվը 16 է, իսկ 3 դրամաշնորհային պայմանագրերի կնքումը ընթացքում է: Երկուստեք արձանագրվեց Ծրագրին ՀՀ մասնակցության աճի դրական միտումը, և կարևորվեց թիրախային միջոցառումների իրականացման շարունակականության անհրաժեշտությունը Ծրագրին մասնակցության հետագա ակտիվացման նպատակով: Ս.Հայոցյանը ներկայացրեց Ծրագրին մասնակցության խթանմանն ուղղված միջոցառումները:

Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի նախագահ Սարգիս Հայոցյանը կարևորեց նաև ԵՀ կողմից տրամադրվող խորհրդատվական և տեխնիկական աջակցության գործիքները Ծրագրին մասնակցության աճի տեսակետից և շեշտեց Ծրագրի ընձեռած հնարավորություններից առավելագույնս օգտվելու ուղղությամբ ձեռնարկվելիք քայլերը: Կարևորվեց նաև Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի և Հայաստանում Եվրոպական միության պատվիրակության միջև ստորագրված դրամաշնորհային պայմանագրի արդյունքում յուրաքանչյուր տարվա անդամվճարի 50 տոկոսի փոխհատուցումը, ինչը զգալիորեն նպաստում է «Հորիզոն Եվրոպա» ծրագրին ՀՀ մասնակցության շարունակականության ապահովմանը և թույլ

է տալիս առավել շատ միջոցներ ուղղել ենթակառուցվածքների զարգացմանը և ազգային գիտահետազոտական էկոհամակարգի արդիականացմանը:

Ս. Հայոցյանը ներկայացրեց գիտության ոլորտում կատարվող բարեփոխումները՝ հղում կատարելով «Բարձրագույն կրթության և գիտության մասին» նոր օրենքին և վերջինով հաստատագրվելիք հիմնական թիրախներին: Ս. Հայոցյանը ներկայացրեց նաև Քաղաքականության աջակցության գործիքի շրջանակում ԵՄ փորձագետների կողմից տրամադրված երաշխավորությունների ուղղությամբ ձեռնարկված միջոցառումների ընթացքը և առաջիկա անելիքները: Մանրամասն ներկայացվեց «Ակադեմիական քաղաք» ծրագիրը և վերջինիս դերը բարեփոխումների իրականացման համատեքստում:

Քննարկվել են նաև մի շարք ընթացիկ աշխատանքային հարցեր:

8.Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթեր

Հայաստան-ԵՄ «Մարդկանց միջև շփումների հարցերով» ենթակոմիտեի նիստի արդյունքում համաձայնեցվել է Բարձրագույն կրթության, գիտության, մշակույթի, սպորտի և երիտասարդության ոլորտներում համագործակցությանն ուղղված միջոցառումների նախագիծը:

ԵՄ-Հայաստան համատեղ կոմիտեի երրորդ նիստի արդյունքում ընդունվել են գործառնական եզրակացություններ, որոնց ուղղությամբ կողմերը կշարունակեն աշխատել 2025 թվականին:

9.Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Հայաստան-ԵՄ «Մարդկանց միջև շփումների հարցերով» ենթակոմիտեի նիստի արդյունքում առաջարկություն է ներկայացվել հնարավորինս սեղմ ժամկետում նախագիծը շրջանառելու և վերջնական փոխհամաձայնեցնելու վերաբերյալ:

ԵՄ-Հայաստան համատեղ կոմիտեի երրորդ նիստի արդյունքում առաջարկություն է ներկայացվել աշխատանքային կարգով համաձայնեցնել հաջորդ՝ Երևանում կայանալիք չորրորդ նիստի անցկացման ժամկետները: Առաջարկություն է եղել նաև շարունակել երկուստեք դիտարկել ԵՄ հետազոտությունների և

նորարությունների ոլորտներում համագործակցության ընդլայնմանն ուղղված հնարավորությունները և այդ նպատակով ԵՄ գործիքների կիրառումը:

Ս. Հայոցյանը եվրոպական կողմին տեղեկացրել է 2025 թվականին Ակադեմիական քաղաք ծրագրի շրջանակում նախատեսվող գիտաժողովի մասին և կարևորել է այդ միջոցառմանը միջազգային, այդ թվում՝ եվրոպական գործընկերների մասնակցությունը: Պայմանավորվածություն է ձեռք բերվել գիտաժողովի ծրագիրը պատրաստ լինելուն պես եվրոպական կողմին փոխանցելու վերաբերյալ:

Սարգիս Հայոցյան

21.10.2024թ.